

Դատական գործ N: ԿԴ3/0091/05/08

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	14-03-2008
Հայցվոր/դիմող	
Անուն	Արշալույս
Ազգանուն	Միերյան
Հայրանուն	Բաղիլ
Հասցե	Ք. Արտաշատ, Աճառյան փող., տուն 11
Պատասխանող	
Անուն:	Արարատի մարզպետարանի աշխատակազմ
Հասցե:	Ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող., շենք 60
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Նախկին աշխատանքում վերականգնելու պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	8
Պետական տուրք:	4000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	
Ամսաթիվ:	14-03-2008
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Կեդի
Դատավորի անուն:	Արթուր Ռոբերտի Պողոսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Կեդի
Դատավորի անուն:	Արթուր Ռոբերտի Պողոսյան
Ամսաթիվ:	21-03-2008
Որոշման հիմքը	
Հոդված	ԿԴՕ 78 Մաս 1 Կետ 1

Հայցվորին ուղարկված որոշման համարը:	Մատյան N: 0829
Ամսաթիվ:	21-03-2008
Ներկայացման ամսաթիվ:	04-05-2008
Որոշման ամսաթիվ:	12-05-2008
Դատաքննության ամսաթիվ:	02-06-2008
Դատաքննության ամսաթիվ:	20-06-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	12-05-2008
Հայցի լուծման ամսաթիվ:	03-07-2008
Հայցի լուծումը:	Բավարարվել է
Հոդված	
Հոդված	ՎԴՕ 112-115
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	<p>Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾ ԹԻՎ ՎԴՅ/0091/05/08</p> <p>Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը (Վեդու նստավայր)</p> <p>Նախագահությամբ դատավոր՝ Ա.Պողոսյանի Քարտուղարությամբ՝ Լ.Օհանյանի</p> <p>Մասնակցությամբ՝ հայցվոր՝ Արշալույս Բաղիլի Միերյանի /Անձնագիր AA 0582992, տրված 15.10.1996թ., 027 կողմից, սոց.քարտ 1510510117/ Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, ք.Արտաշատ, Աճառյան փող., տուն 11 պատասխանող՝ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60 պատասխանողի ներկայացուցիչներ՝ Գ.Մուրադյանի, Ս.Խուրավերդյանի, Վ.Գրիգորյանի</p> <p>Վեդի քաղաքում դռնբաց դատական նիստում քննեց /գործի քննությունը հայտարարվել է ավարտված 2008 թվականի հունիսի 20-ին, վճիռը հրապարակվել է 2008 թվականի հուլիսի 3-ին/ վարչական գործն ըստ հայցի՝ Արշալույս Բաղիլի Միերյանի ընդդեմ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի՝ հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդում գտնվելու ժամանակաընթացքում աշխատավարձը վճարելու պահանջի մասին:</p>

Հայցի առարկան և հիմքը, ներկայացված դիմումներն ու միջնորդությունները

Հայցի առարկան կազմող պահանջները

Անվավեր ճանաչել Արարատի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2008 թվականի փետրվարի 15-ի թիվ 21 հրամանը, վերականգնել նախկին պաշտոնում և պարտադրել մարզպետարանին վճարելու հարկադիր պարապուրդում գտնվելու ժամանակաընթացքում աշխատավարձը:

Հայցի հիմքը կազմող հանգամանքները

Պատասխանողի կողմից կոպտորեն խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, ըստ որի գործատուն, այսինքն՝ մարզպետարանը, իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե հայցվորը վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն երկու անգամ ենթարկված լինի կարգապահական պատասխանատվության: Մինչդեռ, հայցվորը ո՛չ վերջին մեկ տարվա և ո՛չ էլ մարզպետարանում աշխատած շուրջ 12 տարիների ընթացքում երբևիցէ աշխատանքային կարգապահության որևէ խախտում թույլ չի տվել, կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել, իր վրա դրված աշխատանքային պարտականությունները կատարել է անթերի:

Հայցի առարկայի օրինական լինելու հաստատման համար հայցվորի կողմից վկայակոչված նյութաիրավական և դատավարական իրավական ակտերի դրույթները

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդված, 121-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 186-րդ հոդված, 221-րդ հոդվածի 2-րդ մաս, 223-րդ, 264-րդ հոդվածներ:

Հայցադիմումի պատասխանի համառոտ բովանդակությունը
Պատասխանողի կողմից օրենքով սահմանված ժամկետում դատարան հայցադիմումի պատասխան չի ներկայացվել:

Դատաքննության ընթացքում ներկայացված բացման խոսքերը, դիմումները, միջնորդությունները և հետազոտված ապացույցները

1. Հայցվոր կողմի բացման խոսքի համառոտ բովանդակությունը
Հայցվորը պնդեց ներկայացված հայցապահանջը և նշեց, որ միայն մարտի 10-ին է տեղյակ եղել իրեն աշխատանքից ազատելու մասին: Անհարգելի պատճառով երբևէ չի բացակայել աշխատանքից, մինչև ազատելն իրենից գրավոր բացատրություն չի պահանջվել և կարգապահական տույժի երբևէ չի ենթարկվել:

2. Պատասխանող կողմի բացման խոսքի համառոտ բովանդակությունը

Պատասխանողի ներկայացուցիչ Գ.Մուրադյանն առարկեց հայցի դեմ և հայտնեց, որ հայցվորը տարիներ շարունակ աշխատել է մարզպետարանում, մինչ այդ դժգոհություններ չեն եղել, սակայն վերջին ամիսներին իր ղեկավարն ունեցել է որոշակի դժգոհություններ: Ազատելուց առաջ հայցվորից գրավոր բացատրություն չի պահանջվել և նա երբևէ չի ենթարկվել կարգապահական տույժի:

3. Գրավոր ապացույցները

Վարչական գործում առկա գրավոր ապացույցները հրապարակվեցին և հետազոտվեցին:

4. Կողմերի ամփոփիչ ճառերը

Հայցվորը պնդեց ներկայացված հայցապահանջները և նշեց, որ իրեն ազատել են անօրինական, ինչը կրել է քաղաքական բնույթ, քանի որ ինքը եղել է L.Sեր-Պետրոսյանի վստահված անձը:
Պատասխանողի ներկայացուցիչները հրաժարվեցին հանդես գալ անփոփոխ ճառով:

Ղատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները

Լսելով կողմին և ներկայացուցիչներին, հետազոտելով և գնահատելով վարչական գործում առկա գրավոր ապացույցները՝ Վարչական դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ հետևյալ պատճառաբանությամբ.

1. Ղատարանի կողմից պարզված գործի հանգամանքները և ապացույցները, որոնց վրա հիմնվում են դատարանի հետևությունները

1. Սույն գործով Վարչական դատարանը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.

զ ՀՀ Արարատի մարզպետի 1996 թվականի մարտի 30-ի թիվ 32 հրամանով հայցվորը նշանակվել է ՀՀ Արարատի մարզպետարանի Վարչատնտեսական բաժնի պարետ /գ.թ. 21/.

զ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 15.02.2008թ. թիվ 21 հրամանով հայցվորը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա ազատվել է աշխատանքից 2008 թվականի փետրվարի 15-ից /գ.թ. 22/.

զ Հրամանի մասին հայցվորն իրազեկվել է 10.03.2008թ. և 14.03.2008թ. հայցով դիմել ՀՀ վարչական դատարան, ինչը համապատասխանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հրամանն ստանալու օրվանից դատարան դիմելու մեկ ամսյա ժամկետին:

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ: Աշխատանքային իրավունքների չարաշահումն արգելվում է:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում:

Սույն օրենսգրքի 121-րդ հոդվածը նախատեսում է. <<1. Գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատողը վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն երկու անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: 2. Գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատողը թեկուզև մեկ անգամ թույլ է տվել սույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում: 3. Սույն հոդվածին համապատասխան՝ աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:>>: Իսկ կարգապահական պատասխանատվության կիրառման կանոններն ամրագրված են նույն օրենսգրքի <<Աշխատանքային կարգապահությունը>> վերտառությամբ 21-րդ գլխում:

Իր հերթին, նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որպես աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կիրառվող կարգապահական տույժ, համարում է նաև նույն

օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծումը: Համաձայն նույն օրենսգրքի 226-րդ հոդվածի՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը գտնում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է: Տվյալ դեպքում պատասխանողի կողմից սույն գործով չեն վիճարկվել հայցվորին երբևէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու, աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում թույլ տալու և նրանից գրավոր բացատրություն վերցնելու փաստերի բացակայությունը: Ավելին, հայցվորի աշխատանքային պարտականությունները որևէ գրավոր փաստաթղթում չեն ամրագրվել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը, իր հերթին, նախատեսում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է վիճարկվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Վարչական դատարանը գտնում է, որ պատասխանողը, աշխատանքային պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ազատելով հայցվորին աշխատանքից /կիրառելով կարգապահական տույժ/, չի պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները. մասնավորապես՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը հայցվորից չի պահանջել նաև խախտման մասին գրավոր բացատրություն, ինչը հանդիսանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի պահանջների խախտում: Դրանով իսկ խախտվել է նաև ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, որի համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Նույնաբովանդակ պահանջ է ներառում նաև ՀՀ Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով ամրագրված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Բացի այդ, գործատուն՝ ի դեմս պատասխանողի, պարտավոր էր պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ, ինչը վերջինիս կողմից փաստացի չի կատարվել և այն հանդիսանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում:

Այսպիսով, Վարչական դատարանը գտնում է, որ պատասխանողի մոտ 15.02.2008թ. դրությամբ բացակայել են հայցվորին աշխատանքից ազատելու վերը նշված իրավական հիմքերը:

3. Նույն օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ և 8-րդ կետերը նախատեսում են, որ աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելով, վնասի հատուցում ստանալով:

Տվյալ դեպքում Վարչական դատարանը գտնում է, որ վիճելի 15.02.2008թ. թիվ 21 հրամանն ընդունվել է վերը նշված իրավական նորմերի պահանջների խախտմամբ, ուստի այն անհրաժեշտ է

ճանաչել անվավեր և վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը՝ այսինքն՝ վերականգնել հայցվորին իր նախկին աշխատանքում:

4. Ինչ վերաբերում է հայցվորի պահանջին՝ կապված հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձի զանձման հետ, ապա այդ հարաբերությունները կարգավորում է նույն օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները կարող են վերականգնվել: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից զանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Այսպիսով, Վարչական դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի, որպես վնասի հատուցում, անհրաժեշտ է նաև զանձել միջին աշխատավարձ՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, որի սկիզբն է 15.02.2008թ.՝ աշխատանքից ազատելու օրը, իսկ ավարտը՝ հայցվորին իր նախկին աշխատանքում վերականգնելու օրը:

2. Ղատարանի կողմից չպարզված գործի հանգամանքները Ղատարանի կողմից չպարզված գործի հանգամանքներ առկա չեն:

3. Ապացույցները մերժելու փաստարկները Ապացույցները մերժելու փաստարկներ առկա չեն:

4. Գործով կիրառման ենթակա իրավական ակտերը

1. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մաս.

2. ՀՀ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդված.

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ, 27-րդ հոդվածի 4-րդ մասեր.

4. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մաս, 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ և 8-րդ կետեր, 226-րդ հոդված, 265-րդ հոդվածի 1-ին մաս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-115-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ, 229-րդ հոդվածների պահանջներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել ամբողջությամբ՝ անվավեր ճանաչել ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2008 թվականի փետրվարի 15-ի թիվ 21 հրամանը, վերականգնել հայցվոր Արշալույս Բաղիլի Միերյանին նախկին աշխատանքում և պարտավորեցնել պատասխանող ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմին վճարելու հայցվորին իր միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: Սույն վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Ղատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և

	կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ օրինական ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում:
	ԴԱՏԱՎՈՐ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ
Ամսաթիվ:	03-07-2008
Ամսաթիվ:	12-08-2008
Էջերի քանակը:	47
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	13-08-2008
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	12-08-2008
Էջերի քանակը:	47
Էջերի քանակը:	47
Գործին կից նյութեր:	
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Այլ նշումներ:	